ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ*)

Այժմ առաջ բերենք հաստատուած հիմնական կանոնագրութեան աւելի կարեւորութիւն ունեցող յօդուածները, տեղ-տեղ մի քանի բացատրութիւններ կցելով։

Ընդհանուր կանոններ։ «1. Իրանի վեհապետների չնորհած բազմաթիւ բարձրագոյն հրովարտակների համաձայն՝ Պարսկաստանի հայ ժողովուրդը ազատ է կատարելու իր կրօնական պաշտամունքը և կառավարելու իր եկեղեցական-համայնական գործերը ըստ հայաստանեայց եկեղեցու կանոնների և ծէսի ամբողջ պարսից պետութեան սահմաններում արեգնափայլ շահնշահի բարձր հովանաւորութեան ներքոյ։ 2. Ատրպատականի հայոց եկեղեցին և համայնքը՝ իբրև հարազատ ժառանգներ ս. Լուսաւորչի գահին և Մայր Աթոռի, ենթարկուում են նորին վեհափառութիւն ամենայն հայոց հայրապետի ծայրագոյն իշխանութեանը։ 3. Ատրպատականի եկեղեցական-համայնական բոլոր հայ պաշտօնեաները, թէ հոգևորական և թէ աշխարհական, Իրանի վարչական գործունէութեան չրջանում ենթակայ են թեմական իշխանութեան իրաւասութեանը։ 4. Ատրպատականի հայոց համայնքը իր կրօնական և եկեղեցական-համայնական գործերում կախուած է միմիայն հայաստանեայց եկեղեցու իշխանութիւններից, որոնք առաջնորդում են հայոց եկեղեցու կանոնական իրաւունքով։ 5. Իրանի վեհապետների չնորհած բարձրագոյն ֆիրմանների համաձայն՝ հոգևոր աստիճան ունեցող հայերը իրանց ընտանիքով հանդերձ ազատ են մարմնական պատժից, ամեն տեսակ հարկերից և բէգարից։ 6. Ատրպատականի բոլոր հայ հոգևորականները ու եկեղեցական-համայնական պաշտօնեաները կարող են իրանց հաւատա-

*) Տես «Մուրճ» № 6։

րիմ և եռանդուն պաշտօնավարութեան համար պարգևատրուել Իրանի արեգնափայլ շահնշահից և ամենայն հայոց վեհափառ կաթուղիկոսից՝ Ատրպատականի թեմական ժողովի որոշմամբ և թեմի առաջնորդի միջնորդութեամբ։»

Այս յօդուածներից (1–6) երկրորդը Թիֆլիսի նախագծում բոլորովին չը կար. միւսները հիմնական կանոնադրութիւնը առաջ է բերում աւելի կամ պակաս կարևոր փոփոխումներով և լրացումներով։

«7. Հայոց իւրաքանչիւր եկեղեցական-համայնական կրթական կամ բարեգործական հաստատութիւն (դպրոցներ, ընթերցարան, հիւանդանոց, որբանոց, ուսումնարաններ եայլն) պիտի լինի սեփականութիւն որևէ եկեղեցու կամ վանքի և չէ կարող անկախ և ինքնուրոյն իրաւաբանական անձի գոյութիւն ունենալ։ Այդ հաստատութիւններից իւրաքանչիւրը իրան յատկացուած գոյքից օգտւում է և կառավարւում իր յատուկ կանոնադրութեամբ։ 8. Իւրաքանչիւր ծխական եկեղեցու կամ վանքի պատկանող, այլև որևէ կրթական կամ բարեգործական եկեղեցական-համայնական հաստատութեան յատկացուած գոյքերը համարւում են ընդհանուր անձեռնմխելի սեփականութիւն հայաստանեայց եկեղեցու։ Այս մասնակի կրթական և բարեգործական հաստատութիւններից որևէ մէկի փակման դէպքում՝ նրան յատկացուած գոյքը ենթարկւում է այն ծխական եկեղեցու կամ վանքի տնօրինութեանը, որին պատկանում էր նոյն հաստատութիւնը։ Իսկ որևէ ծխական եկեղեցու կամ վանքի փակման դէպքում նրա գոյքը ենթարկւում է թեմական ժողովի տնօրինութեան»։

Այս երկու յօդուածը (7, 8) նախ՝ հաստատում են մեր եկեղեցու կանոնական իրաւունքով նուիրագործուած՝ եկեղեցական-համայնական գոյքի սեփականատիրութեան միութեան սկզբունքը, որով իւրաքանչիւր եկեղեցական մասնակի հիմնարկութեան և հաստատութեան յատկացուած գոյքը հանդիսանում է բովանդակ հայոց եկեղեցու սեփականութիւն։ Ինչպէս յայտնի է, նոյն այդ սկզբունքը հաստատուած է նաև ռուսաց օրէնքով (տես Օրինագրքի XI հատ. 1213 յօդ.)։ Երկրորդ՝ 7-րդ և 8-րդ կանոնների համաձայն ինքնուրոյն իրաւաբանական անձ են—եկեղեցիները (ծխական համայնքները) և վանքերը. իսկ ամեն տեսակի կրթական և բարեգործական հիմնարկութիւններ՝ անջատ և ինքնուրոյն իրաւական գոյութիւն չունենալով, իրաւաբանական անձ չը լինելով, իրաւական կախումն պէտք է ունենան որևէ եկեղեցուց կամ վանքից, որին կից են գտնւում (իրաւաբանական մտքով) և որին պատկանում են։ Կատարելա-

պէս անջատ և ինքնուրոյն չը լինելով՝ այդ կրթական և բարեգործական հաստատութիւնները «կառավարւում են և օգտւում իրանց յատկացուած գոյքից» համաձայն իւրաքանչիւր հաստատութեան յատուկ կանոնադրութեան. հետևապէս, նայելով կանոնադրութեանը, կարող են դարձեալ որոշ չափի ինքնուրոյնութիւն և վարչական անկախութիւն ունենալ։

«9. Ատրպատականի թեմի կառավարութիւնը, հայոց եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն, հիմնուած է ընտրական սկզբունքի վրայ։ 10. Ատրպատականի թեմում ձայն և քուէ տալու, այլ և ընտրուելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունեն այն բոլոր թէ հոգևորական և թէ աշխարհական ազգայինները, որոնք առնուազն վեց ամիս ապրել են թեմի միևնոյն տեղում, վճարել են եկեղեցական-համայնական պատշաճաւոր իշխանութիւններից սահմանուած բոլոր եկեղեցական և թեմական տուրքերը և քսան և մէկ տարեկանից պակաս չեն։ Յատկապէս թեմական ժողովի և թեմական խորհրդի անդամ ընտրուելու իրաւունքից օգտւում են երեսուն տարեկանից վեր հասակ ունեցողները»։ 11, 12, 14 և 15-րդ յօդուածները տես վերևում առաջ բերուած յօդուածիս ընթացքում։

«13. Բոլոր պաշտօնեաները, թէ հոգևորական, թէ աշխարհական, թէ պատւաւոր, թէ վարձատրելի, վերընտրելի են։ Բացի յատկապէս յիշուած դէպքերից։ 16. Թեմական հասոյթների աղբիւրներն են՝ ա) թեմական եկեղեցական-համայնական տուրքեր և թղթատուրքեր. բ) թեմական անշարժ և շարժական գոյքերի եկամուտներ։ գ) Թեմական մոմավաճառութեան կրպակից, թեմական տպարանից և այլ ձեռնարկութիւններից ստացուելիք եկամուտներ։ 17. Շարժական և անշարժ եկեղեցական-համայնական գոյքեր գնել կարելի է՝ մինչև յիսուն թուման ծխական ժողովի որոշմամբ և գործակալութեան խորհրդի թոյլտուութեամբ. իսկ յիսուն թումանից բարձր—թեմական ժողովի թոյլտուութեամբ։ 18. Եկեղեցական-համայնական շարժական և անշարժ գոյքերը ծախել կամ փոխանակել կարելի է՝ մինչև երկու հարիւր յիսուն թումանի—թեմական խորհրդի որոշմամբ, մինչև հազար թումանի—թեմական ժողովի որոշմամբ, իսկ դրանից վեր՝ թեմական ժողովի որոշմամբ և ամենայն հայոց կաթուղիկոսի թոյլտուութեամբ։ 19. Ատրպատականի թեմում սովորական պսակների հրամանը տալիս է գործակալ քահանան. չհաստատեան կասկածելի դէպքերում թոյլտուութիւնը տալիս է թեմական առաջնորդը. իսկ արտակարգ դէպքերում դիմելու է ամենայն հայոց վեհափառ կաթուղիկոսին։ 20. Թաւրիզ քաղաքը, որպէս Ատր-

պատականի թեմի վարչական կենտրոն, թեմական առաջնորդի աթոռանիստ քաղաքն է։ Թաւրիզի առաջնորդարանումն է գումարւում թեմական խորհուրդը։ Առաջնորդարանի ներքին մատակարարութիւնը (բացի կահաւորութիւնից) հոգում է իր ոճկի հաշւից թեմական առաջնորդը։ 21. Պատշաճաւոր իշխանութեան հրամանով և պաշտօնական գործով ճանապարհորդելիս՝ պաշտօնեաները կարող են ճանապարհածախս ստանալ թեմական խորհրդի հրահանգի համաձայն կամ թեմապատկան կամ ծխական գումարներից և կամ ի հաշիւ գործին մասնակից մասնաւոր մարդկանց։ 22. Այս հիմնական կանոնագրութիւնը լրացնել, փոփոխել կամ որևէ յօդուած դուրս գցել կարելի է թեմական ժողովի որոշմամբ (տես յօդ. 28) և ամենայն հայոց կաթուղիկոսի թոյլտուութեամբ։»

Այս քսան և երկու յօդուածը հիմնական կանոնագրութեան ընդհանուր կանոններն են։

«23. Պարբերաբար, ամեն չորս տարին մի անգամ, Ատրպատականի հայ ժողովուրդը թեմական ժողով կազմելու համար պատգամաւորներ է ընտրում չորս տարի ժամանակով։— Պատգամաւորների լիազօրութեան քառամեայ ժամանակամիջոցը լրանալուց երեք ամիս առաջ՝ թեմական առաջնորդը կամ սրան փոխարինող առաջնորդական տեղապահը, իսկ սրա էլ բացակայութեան դէպքում թեմական խորհրդի աւագ անդամը շրջաբերական է ուղարկում թեմի բոլոր եկեղեցիներին, հրաւիրելով ներկայացուցիչներ ընտրել գործակալութեան ժողով գումարելու և պատգամաւորներ ընտրելու համար։ Ծխական ժողովներից ընտրուած ներկայացուցիչներից գործակալութեան ժողովներ են գումարւում (տես յօդ. 56), որոնք և ընտրում են պատգամաւորներ թեմական ժողովին անդամակցելու համար։— Իւրաքանչիւր գործակալութեան ժողովն ուղարկում է առնուազն մէկ պատգամաւոր. իսկ բազմամարդ գործակալութիւնները իրանց համայնքի իւրաքանչիւր երկուհարիւր տան համար ուղարկում են մի-մի պատգամաւոր (վերջին երկու հարիւրը կարող է լրիւ չը լինել, բայց ոչ պակաս հարիւր մէկ ծխից)։ Ծանօթութիւն ա. գաւառացիք կարող են պատգամաւոր ընտրել նաև թաւրիզաբնակ ազգայիններից և առհասարակ դրսեցիներից։ Ծանօթ. բ. իւրաքանչիւր պատգամաւոր պէտք է թեմական ժողովում ներկայանայ՝ իր լիազօրութիւնը հաստատող վկայականով, որը ստորագրուած պիտի լինի գործակալութեան ժողովի նախագահից և անդամներից և վաւերացուած գործակալական խորհրդի կնքով։ Ծանօթ. գ. (տես վերևում առաջ բերուած)։ Ծանօթ. դ. հին պատգամաւորների լիազօրութիւնը

չարունակում է մինչև նոր պատգամաւորների ընտրուելը։ Ծանօթ. ե. Թեմական ժողովի կազմի և սրա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների մասին թեմական առաջնորդը իւրաքանչիւր անգամ զեկուցանում է ամենայն հայոց կաթուղիկոսին։»

«56. Պարբերաբար ամեն չորս տարին մի անգամ իւրաքանչիւր գործակալութեան բոլոր եկեղեցիների ծխական ժողովները ներկայացուցիչներ են ընտրում գործակալութեան ժողով գումարելու համար։ Իւրաքանչիւր ծխական համայնք ուղարկում է առնուազն մի ներկայացուցիչ. իսկ բազմաձուխ եկեղեցիները իրանց համայնքի իւրաքանչիւր քսան և հինգ տան համար մի-մի ներկայացուցիչ են ընտրում։» *)

Հիմնական կանոնագրութեան այս երկու (23 և 56) յօդուածները փոփոխել են Թիֆլիսի նախագծով՝ պատգամաւորների ընտրութեան համար որոշուած եղանակը։ Թիֆլիսի նախագիծը այսպէս էր տնօրինում։—Իւրաքանչիւր 15—20 տուն օրինական համախօսականով ընտրում է մէկ ներկայացուցիչ. իւրաքանչիւր 200 տուն կազմում է մէկ «ընտրողական շրջան», և իւրաքանչիւր «ընտրողական շրջանի» բոլոր ներկայացուցիչները (ուրեմն՝ մօտաւորապէս 10 հոգի) ժողովուելով նոյն «շրջանի կետրոնավայրում» (2)՝ ընտրում են մէկ պատգամաւոր թեմական ժողովին մասնակցելու համար։ Այսպիսով Թիֆլիսի նախագիծը պատգամաւորների ընտրութեան դէպքում անտես էր առնում թէ ծխական ժողովը, որի գոյութիւն ընդհանրապէս ընդունում էր, և թէ գործակալական ժողովը, որի մասին ոչ մի ակնարկ չէր պարունակում։ Սակայն թեմի վարչական հիմնական բաժանմունքներից մէկը—գործակալութիւնը **) իր ժողովը ունենալու իրաւունքից զրկելու, մինչդեռ այդ իրաւունքը ունեն թէ ծխական եկեղեցիները և թէ թեմը, ոչ մի հիմք չը կայ. անշուշտ պակաս չեն լինելու այն գործերը, որոնց համար նոյնչափ յարմար և հարկաւոր կը լինի գործակալական ժողովի գոյութիւնն ու գործունէութիւնը, որչափ ծխա-

---

*) Այս 56-րդ յօդուածը ունի մի այսպիսի ծանօթութիւն. «իւրաքանչիւր ներկայացուցիչ պէտք է գործակալական ժողովում ներկայանայ՝ իր լիազօրութիւնը հաստատող վկայականով, որը պէտք է ստորագրուած լինի ծխական ժողովի նախագահից և անդամներից և վաւերացուած ծխական ժողովի կնքով։»

**) Հիմնական կանոնագրութեան 55-րդ յօդուածի համաձայն՝ «Ատրպատականի թեմն ունի տասն և չորս գործակալութիւն. այն է՝ Մակու, Սալմաստ, Խոյ, Ուրմի, Մարաղա, Մուժամբար, Ղարադաղ, Մեղրվար, Տզմար, Մնջուան, Փէյվան, Թաւրիզ, Սոուղբուլաղ, Սուլդուզ»։

կան ժողովի և թեմական ժողովի գոյութիւնը հարկաւոր է համապատասխան գործերի նկատմամբ։ Ճիշտ է, հաստատուած հիմնական կանոնադրութիւնն էլ բաւականանում է գործակալական ժողովի գրեթէ լոկ գոյութիւնը յայտարարելով (իսկ նրա կատարելիք գործերից առայժմ յիշում է միայն պատգամաւորներ և գործակալական խորհրդի անդամներ ընտրելը), առանց որոշելու գէթ ընդհանուր և գլխաւոր գծերով այդ ժողովի գործունէութեան և իրաւասութեան շրջանը։ Բայց գործակալութեան ժողովի գործունէութիւնը և թեմական ու ծխական ժողովների հետ ունենալիք վարչական յարաբերութեան եղանակը որոշելը միայն այն ժամանակ հնարաւոր և հարկաւոր կը լինի, երբ տեղական այժերը և պահանջները զարգանալով և հասունանալով՝ այդպիսի օրգանի ընդարձակ գործունէութեան կարիք առաջ կը գայ։ Յամենայն դէպս՝ կատարեալ հիմք կար այդ խնդրի աւելի լիակատար կարգաւորումը տեղական համայնքի նախաձեռնութեանը և ապագային թողնելու, չատանալով միայն նրանով, ինչ որ գտնում ենք ներկայ հիմնական կանոնադրութեան մէջ։ Իսկ գործակալական և ծխական ժողովների գոյութիւնը ընդունելուց յետոյ այլևս արհեստական «ընտրողական շրջանների» կարիք չը կար. հէնց այդ ժողովները ամենայն պատշաճութեամբ կարող են կատարել «ընտրողական շրջաններին» յանձնուած ընտրութիւնները։ Գործակալական ժողով չ՝ունենալով, Թիֆլիսի նախագիծը նոյն արհեստական «ընտրողական շրջաններին» էր դիմում նաև գործակալական խորհրդականների ընտրութեան համար, որ հիմնական կանոնադրութիւնը յարմարութեամբ յատկացնում է նոյն գործակալական ժողովի իրաւասութեանը։ Բայց այս յարմարութիւնից, հիմնական կանոնադրութեան յիշեալ յօրինուածքը նաև այն առաւելութիւնն ունի, որ յար և նման թեմի հիմնական վարչական բաժանման, թեմի հիմնարկութիւններն էլ մի ներդաշնակ և լրիւ սիստեմ են կազմում։ Գործադիր և մշտական հիմնարկութիւններին (թեմական, գործակալական և ծխական խորհուրդներին) զուգընթաց՝ հիմնական կանոնադրութիւնը դնում է նաև երեք ժողովական հիմնարկութիւններ (թեմական, գործակալական և ծխական ժողովները)՝ որպէս կարգադիր և վերահսկիչ հիմնարկութիւններ իւրաքանչիւրն իր շրջանում։

Թիֆլիսի նախագիծը առհասարակ ուռանձին ուշադրութիւն է դարձրած եղել իշխանութեան գործադիր մշտական օրգանների (խորհուրդների) վրայ, աւելի խնամքով է կազմել սրբան վերաբերեալ յօդուածները. մինչդեռ ժողովների մասին

եղած կանոնները շատ պակաս չափով էին մշակուած։ Որոշ հիմք կար ծխական ժողովին մի յատուկ գլուխ չը նուիրելու (այն ինչ ծխական խորհրդին նուիրուած էր ը. գլուխը, ուր սակայն մի քանի յօդուած ծխական ժողովի և երեսփոխի մասին էին խօսում)։ ծխական ժողովի նկատմամբ կարելի էր մէկերկու յօդուածով միայն բաւականանալ. որովհետև նոյն ծխական ժողովի մասին մանրամասն կերպով տնօրինում է «Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցու ծխական կանոնադրութիւնը» (տես «Արարատ» պաշտօնական ամսագրում), որ մեր եկեղեցու համայն (ընդհանուր) ծխական կանոնադրութիւնը լինելով, մի քանի աննշան փոփոխութիւններով գործադրելի է նաև Պարսկաստանի թեմերում։ Սակայն, ոչ մի հիմք չը կար բոլորովին անտես առնելու գործակալական ժողովի գոյութիւնը և թերի կերպով որոշելու թեմական ժողովի նման նշանաւոր և հեղինակաւոր օրգանի գործունէութիւնը, ընդհակառակը չնչտելով և ընդարձակելով թեմական խորհրդի գործունէութեան շրջանը ի վնաս թեմական ժողովի իրաւասութեան։

Թեմական ժողովի գործունէութիւնը, իրաւունքների և պարտականութիւնների շրջանը որոշող 30-րդ յօդուածը հիմնական կանոնադրութեան այսպէս է տնօրինում. «Թեմական ժողովի իրաւասութիւնը։ ա. Թեմական ժողովը իրաւունք ունի սահմանելու և հրատարակելու ամբողջ թեմի բոլոր գործերի և եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների և հաստատութիւնների համար պարտադիր կանոնադրութիւններ և կարգադրութիւններ, ղեկավարուելով հայոց կանոնական իրաւունքով և այս հիմնական կանոնադրութեան սկզբունքներով՝ նախապէս ներկայացնելով իւրաքանչիւր կանոնադրութիւնը ամենայն հայոց կաթուղիկոսին ի հաստատութիւն։ բ. Թեմական ժողովը վերին և ընդհանուր հսկողութեան և հաշուառութեան իրաւունք ունի թեմի բոլոր եկեղեցական-համայնական գործերում։ գ. Թեմական ժողովը պատգամաւորներ է ընտրում թեմի կողմից հայաստանեայց եկեղեցու համագումար ծայրագոյն ժողովին և այլ եկեղեցական-համայնական ընդհանուր գործառնութեանց մասնակցելու համար։ դ. Ընտրում է և հրաժարեցնում է թեմական առաջնորդին՝ ամենայն հայոց կաթուղիկոսի հաստատութեամբ (տես 28-րդ յօդ.)։ ե. Որոշում է իւրաքանչիւր քառամեակի համար թեմական առաջնորդի և այլ պաշտօնեաների ռոճիկը։ զ. Քննում և որոշում է նոր վանքեր հիմնելու խնդիրը։ է. Ընտրում է և հրաժարեցնում է պաշտօնից թեմական խորհրդականներին, փոխխորհրդականներին և

վերաստուգող յանձնաժողովի անդամներին։ *) ը. Քննում է թեմական առաջնորդի դէմ ծագած բողոքները և ներկայացնում ամենայն հայոց կաթուղիկոսին։ Քննում և վճռում է թեմական խորհրդի դէմ ծագած բողոքները։ թ. Քննում և հաստատում է առաջիկայ երկամեակի համար թեմական խորհրդի կազմած թեմական ընդհանուր նախահաշիւը։ ժ. Քննում և հաստատում է թեմական խորհրդի անցած երկամեակի հաշիւը, նախապէս լսելով վերաստուգող յանձնաժողովի զեկուցագիրը։ ժա. Զանազան խնդիրների ուսումնասիրութեան համար, ինչպէս և այլ յանձնարարութիւններ կատարելու պէտք եղած դէպքում ընտրում է յանձնաժողովներ, իրաւունք ունենալով կարևոր դէպքերում դրսից ձեռնհաս մարդկանց հրաւիրելու։ ժբ. Սահմանում և ժամանակն հրահանգով որոշում է թեմական եկեղեցական-համայնական տուրքերի (օր. Լուսաւորչի լուման, պտուղը, աթոռահաս պսակադրամը, լուսագինը, հոգեբաժինը...) և թեմական, գործակալական և ծխական խորհուրդներից տրուող, հաստատուող և վաւերացուող վաւերաթղթերի համար վճարելիք թղթատուրքի տեսակները, քանակը, բաշխման և գանձման ձևը։ Ծանօթութիւն։ Իւրաքանչիւր ստացուած տուրքի մասին արձանագրում է ժապաւինեալ մատեանում, և վճարողին ստացագիր տրում. իսկ վերցրած թղթատուրքի քանակը նաև նշանակում է նոյն վաւերաթղթի վրայ։»

30-րդ յօդուածի այս 12 (ժբ) կէտերից Թիֆլիսի նախագիծը ունէր միայն դ. ե-ի մի մասը, է. ը-ի մի մասը և ժ։ ե. կէտը նոր վանքեր հիմնելու փափուկ խնդրի լուծումը յատկացնում է թեմական ժողովին, մինչդեռ Թիֆլիսի նախագծով այդ խնդիրը որոշողը թեմական խորհուրդն էր։ ժբ. կէտը, որ տուրքավճարման վերաբերեալ մի հիմնական կանոն է, Թիֆլիսի նախագծում միայն մասամբ կար, այն ևս յատկացուած թեմական խորհրդի իրաւասութեան շրջանին։ Մինչդեռ Թիֆլիսի նախագիծը նախատեսել էր տուրքերի միայն «քանակութեան և գանձման ձևի ժամանակի հրահանգով որոշելը», հիմնական կանոնադրութիւնը իր ժբ-րդ կէտում բացի դրանից նախատեսել է «տուրքերի և թղթատուրքերի» նաև «տեսակնե-

*) Այս «վերաստուգող յանձնաժողովի» համար հիմնական կանոնադրութեան մէջ կայ երկու յատուկ յօդուած. «33. Վերաստուգող յանձնաժողովը բաղկանում է երեք անդամից և երկու փոխանդամից և ընտրւում է թեմական ժողովից երկու տարի ժամանակով։ 34. Վերաստուգող յանձնաժողովը զումարուելով սովորական երկամեայ թեմական ժողովից առնուազն մի ամիս առաջ, քննում և ստուգում է թեմական խորհրդի գործունէութիւնն ու ընդհանուր հաշիւը և զեկուցագիր ներկայացնում թեմական ժողովին (յօդ. 48, ժդ.)»։

րի և բաշխման ձևի սահմանելը»։ Այս վերջին խնդիրը Թիֆլիսի նախագծում անտես առնուած լինելով՝ անորոշ և տարակուսելի էր մնում, թէ ինչ իշխանութիւն որեէ պարտադիր եկեղեցական-համայնական տուրք և թղթատուրք սահմանելու իրաւունք ունի, որ անշուշտ տուրքերին վերաբերեալ հարցերից ամենակարևորն է։ Բայի այդ կարևոր լրացումից՝ տուրքերին վերաբերեալ ծանրակշիռ հարցերի որոշումը բնական էր յատկացնել ոչ թէ թեմական խորհրդին, այլ թեմական ժողովին, որ եկեղեցու համայնքի ընտրեալ պատգամաւորներից կազմուելով՝ նոյն համայնքի կամքի և անձնաւորութեան իրաւասու ներկայացուցիչն է հանդիսանում։ Բայի այդ եօթը կէտերից (գ, ե, զ, է, ը, ժ, և ժբ)՝ 30-րդ յօդուածի մնացած հինգ կէտերը (ա, բ, դ, թ և ժբ) բնաւ չը կային Թիֆլիսի նախագծում։

Թեմական խորհրդի իշխանութեան սահմանը որոշում է հիմն. կանոնադրութեան 48-րդ յօդուածը։ «48. Թեմական խորհուրդը ա. հսկում է թեմի բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների և պաշտօնեաների վարչական գործունէութեան վրայ։ բ. Կազմում է թեմի եկեղեցական-համայնական հաստատութիւնների կանոնադրութիւնների նախագծերը և առաջարկում է թեմական ժողովին ի հաւանութիւն։ գ. Քննում և որոշում է եկեղեցիներ և եկեղեցական-համայնական կրթական բարեգործական հաստատութիւններ հիմնելու խնդիրը (նոր վանքեր հիմնելու խնդիրները քննում է և ներկայացնում է թեմական ժողովին ի հաստատութիւն)։ դ. Նոր հիմնուելիք կրթական և բարեգործական եկեղեցական-համայնական հաստատութիւնների համար կազմում է և ժամանակաւորապէս հաստատում է կանոնադրութիւններ, որպիսիք պարտաւորապէս ներկայացնում է առաջիկայ թեմական ժողովի հաւանութեան. և. հրահանգներ է տալիս թեմի ստորակարգ եկեղեցական-համայնական հաստատութիւններին և պաշտօնեաներին, ղեկավարուելով այս հիմնական կանոնադրութիւնով, ինչպէս և ապագայում թեմական ժողովի կողմից մշակուած և ամենայն հայոց կաթուղիկոսից հաստատուած կանոնադրութիւններով և կարգադրութիւններով։ Ծանօթութիւն. թեմական խորհրդի յօրինած այս հրահանգների, ինչպէս և նախորդ դ. կէտում յիշուած ժամանակաւոր կանոնադրութիւնների օրինակները վաւերացուում են թեմական առաջնորդի կնիքով և ստորագրութեամբ։ զ. Ժողովում, պահում և շահեցնում է բոլոր թեմապատկան հասոյթները և արդիւնքները. կատարում է թեմական ընդհանուր ծախքերը և առհասարակ վերջնական վճիռներ է կայացնում թեմի ընդհանուր տնտեսական հարցերի մասին, ղեկավարու-

լով նախահաչուով։ Թոյլ է տալիս յիսուն թումանից աւելի ծախսեր անել վանքերի և եկեղեցիների վրայ։ Է. Թոյլատուութիւն և ժապաւէնեալ մատեաններ է տալիս հանգանակութիւններ անելու Ատրպատականի թեմում, ինչպէս և թեմից դուրս։ Ը. Նշանակում է թեմական տեսուչ թեմի բոլոր եկեղեցական-համայնական կրթական հաստատութիւններին վերահսկելու համար։ Թ. Հարկաւոր դէպքերում նշանակում է վերաքննիչներ (ռեվիզորներ) եկեղեցական-համայնական հաստատութիւնների գործերն ու հաշիւները վերաստուգելու համար։ Ժ. Հաստատում է պաշտօնում և հրաժարեցնում է դպրոցների հոգաբարձութիւններին, գործակալական խորհրդականներին, երեսփոխաններին և ծխական խորհրդականներին. հաստատում և հեռացնում է ուսուցիչներին՝ հոգաբարձութիւնների առաջարկութեամբ։ Ժա. Մանրամասն ուսումնասիրութիւն պահանջող հարցեր քննելու համար ընտրում է յանձնաժողովներ իր միջից կամ դրսի անձերից, որոնք հարցը ուսումնասիրելուց յետոյ՝ զեկուցագիր են ներկայացնում թեմական խորհրդին։ Ժբ. Ամեն տարի բաժանում է գործակալական և ծխական խորհուրդներին հարկաւոր նոր ժապաւէնեալ մատեաններ և յետ ստանում հները։ Ժգ. Որոշում է մանրամասն հրահանգով թեմական, գործակալական և ծխական խորհուրդների կողմից արբուող, հաստատուող և վաւերացուող վաւերաթղթերի համար վճարելիք թղթատուրքի քանակը և գանձման ձևը և առաջարկում թեմական ժողովին ի հաստատութիւն։ Ժդ. Տարին մի անգամ զեկուցագիր է մատուցանում ամենայն հայոց կաթուղիկոսին թեմի կացութեան մասին։ Երկու տարին մի անգամ թեմական ժողովին մանրամասն հաշիւ է ներկայացնում թեմի եկեղեցական-համայնական գործերի, գոյքերի և հիմնարկութիւնների վիճակի և կառավարութեան մասին, այլ և բոլոր հաստատութիւնների և պաշտօնեաների գործունէութեան մասին։ Թեմական խորհուրդը պարտաւոր է թեմական ժողովի սովորական նիստից առնուազն մի ամիս առաջ պատրաստ ունենալ այս ընդհանուր հաշիւը, այլ և իր գործունէութեան վերաբերող ամեն տեսակ վաւերաթղթեր՝ ըստ պահանջման վերաստուգող յանձնաժողովին յանձնելու համար։ Ժե. Իբրև նոտարական հաստատութիւն՝ հաստատում է ազգայինների կտակագիրը, մուրհակները, կալուածագրերը, կապալաթղթերը և այլ այդպիսի փաստաթղթեր՝ և վաւերացնում է իրան դիմողների ստորագրութիւնը։ Ժզ. Իբրև առաջին ատեան՝ քննում է պսակալուծութեան վերաբերեալ գործերն ու առաջարկում է ամենայն հայոց կաթուղիկոսին ի անօրինութիւն. քննում և վճռում է թեմի

բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների և պաշտօնեաների կողմից և սրանց դէմ ստացուած բողոքները և գանգատները, այլ և հոգևորականների և ժողովրդի մէջ ծագած տարաձայնութիւնները։ Ժէ. Իբրև երկրորդ ատեան՝ քննում և վճռում է այն բոլոր վէճերը, խնդիրները և գանգատները (ամուսնական, ժառանգական և այլն), որոնք սկսուել են գործակալական խորհրդում. այլ և վճռում է խնամակալութեան վերաբերեալ բոլոր հարցերը»։

Թեմական խորհրդի իրաւասութեան շրջանը որոշող այս յօդուածը արդէն Թիֆլիսի նախագծում աւելի լիակատար կերպով մշակուած լինելով՝ փոփոխութիւնները այնքան կարևոր չեն։ Հիմնական կանոնադրութեան այդ (48-րդ) յօդուածի բոլոր կէտերը, բայի բ, գ, դ, և ժգ-րդ կէտերից, գրեթէ անփոփոխ կրկնութիւն են Թիֆլիսի նախագծում եղած յօդուածների։ Իսկ այդ բ, գ, դ, և ժգ-րդ կէտերով հիմնական կանոնադրութիւնը սահմանափակում է թեմական խորհրդի իշխանութիւնը յօգուտ թեմական ժողովի իրաւասութեան։ գ. կէտում փոխուած է այն կտորը, որ նոր վանքեր հիմնելու խնդրին էր վերաբերում, վերջնական որոշումը թեմական ժողովից կախուած յայտարարելով։ բ-րդ և դ-րդ կէտերը թեմական խորհրդին՝ եկեղեցական-համայնական հաստատութիւնների կանոնադրութիւնների լոկ նախագիծը կազմելու իրաւունք են տալիս (հաստատելու իրաւունքը թեմական ժողովին վերապահելով), և միայն նոր հիմնուելիք կրթական և բարեգործական հաստատութիւնների համար թոյլ է տրուում, որպէս բացառութիւն, որ մի առժամանակ պարտադիր ոյժ ունենան թեմական խորհրդի կազմած և «ժամանակաւորապէս հաստատուած» կանոնադրութիւնները, պահանջելով միևնոյն ժամանակ, որ այդ ժամանակաւոր կանոնադրութիւնները պարտաւորապէս ներկայացուեն առաջիկայ թեմական ժողովի հաստատութեանը։ Ժգ-րդ կէտը թղթատուրքի քանակը և գանձման ձևը որոշող հրահանգի լոկ նախագիծը կազմելու իրաւունք է տալիս թեմական խորհրդին, հաստատելը թեմական ժողովին վերապահելով։

Թեմական առաջնորդին են վերաբերում յետագայ վեց յօդուածը. «35. Հայաստանեայց եկեղեցու կանոնների համաձայն՝ թեմական առաջնորդին անորոշ ժամանակով ընտրում է թեմական ժողովը և առաջարկում ամենայն հայոց կաթուղիկոսին ի հաստատութիւն։ Ամենայն հայոց կաթուղիկոսը հաստատում է ընտրուածին և միջնորդում է Իրանի շահնշահի առաջ ճանաչել նրան ամենայն հայոց կաթուղիկոսի փոխանորդ Ատրպատականի թեմում։ 36. Թեմական առաջնորդը միանձնաբար տը-

նորինում է թեմի զուտ կրօնական գործերը իր աստիճանին և պաշտօնին յատկացուած իրաւունքների սահմաններում և հրամայում է հայաստանեայց եկեղեցու կանոնների և ծէսերի անթերի կատարման և հոգևորականների ու բոլոր պաշտօնեաների հարազատ պաշտօնավարութեան վրայ։ 37. Թեմական առաջնորդը պարտաւոր է այցելել ամբողջ թեմը առնուազն չորս տարին անգամ։ Թեմում չրջագայելիս թեմական առաջնորդը առանձին ուշադրութիւն է դարձնում ժողովրդի, հոգևորականութեան, եկեղեցիների, վանքերի և եկեղեցական-համայնական կրթական ու բարեգործական բոլոր հաստատութիւնների վիճակի վրայ, անհրաժեշտ դէպքերում հարկաւոր կարգադրութիւններ անելով, որոնց մասին հաղորդում է թեմական խորհրդին։ 38. Թեմական առաջնորդը պատուաւոր նախագահ է թեմական ժողովի. ի պաշտօնէ նախագահում է թեմական խորհրդին. նշանակում և հրաժարեցնում է առաջնորդական տեղապահին, առաջնորդական փոխանորդներին (տես 42 յօդ.), վանահայերին. եթէ ունի եպիսկոպոսական աստիճան, ձեռնադրում է քահանաներ և այլ եկեղեցական սպասաւորներ հայաստանեայց եկեղեցու կանոնների համաձայն. իսկ կուսակրօնների ձեռնադրութեան համար հայցում է ամենայն հայոց կաթուղիկոսի թոյլտուութիւնը։ Ծանօթութիւն ա. Ատրպատականի թեմում ոչ ոք իրաւունք չունի ձեռնադրութիւն կատարելու առանց թեմի առաջնորդի գրաւոր թոյլտուութեան։ Ծանօթ. բ. առաջնորդի մասնակցութեամբ կատարուած օրինակատարութիւնների և ծէսերի համար ստացուող աջահամբոյրը կազմում է առաջնորդի անձնական եկամուտը։ 39. Թեմական առաջնորդը հանդիսանում է թեմի ներկայացուցիչ ամենայն հայոց կաթուղիկոսի, պարսից կառավարութեան և այլ պետութեանց դիւանագիտական մարմինների առաջ։ 40. Թեմական առաջնորդը թեմից բացակայելու համար հայցում է ամենայն հայոց կաթուղիկոսի թոյլտուութիւնը»։

Առաջնորդական տեղապահին և առաջնորդական փոխանորդներին նուիրուած է մի-մի յօդուած։ «41. Առաջնորդական տեղապահը նշանակւում է հոգևորականներից։ Առաջնորդական տեղապահը ի պաշտօնէ անդամակցում է թեմական խորհրդին։ Թեմական առաջնորդի բացակայութեան, տկարութեան, այլ և առաջնորդական աթոռի թափուր եղած ժամանակ՝ առաջնորդական տեղապահը ունի առաջնորդական բոլոր վարչական իրաւունքները։ 42. Ատրպատականի թեմը ունի երկու փոխանորդութիւն՝ Սալմաստ-Ուրմիի և Ղարադաղի։ Առաջնորդական փոխանորդներին նշանակում է կուսակրօն հոգևորականներից և

պաշտօնից հրաժարեցնում է թեմական առաջնորդը ամենայն հայոց կաթուղիկոսի հաստատութեամբ։ Առաջնորդական փոխանորդների իրաւունքները և պարտականութիւնները որոշում է թեմական ժողովը՝ թեմական առաջնորդի հաստատութեամբ»։

Գործակալութեան խորհրդի իրաւասութեան շրջանը որոշում է 61-րդ յօդուածը։ «Գործակալութեան խորհուրդը ա) մերձաւոր հսկողութիւն ունի գործակալութեան բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների և պաշտօնեաների վարչական գործունէութեան վրայ։ բ) Պարտաւոր է գործակալութեան բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների վիճակի ու կառավարութեան, ինչպէս նաև պաշտօնեաների վարչական գործունէութեան մասին տարին մի անգամ տեղեկագիր ուղարկել թեմական խորհուրդին։ գ) Ժողովում և երեք ամիսը մի անգամ օրինաւոր ցուցակագրութեամբ ուղարկում է թեմական խորհուրդին գործակալութեան բոլոր թեմապատկան հասոյթները և արդիւնքները։ դ) Ամեն տարուայ սկզբին գործակալութեան բոլոր ծխական խորհուրդներին բաժանում է թեմական խորհուրդներից ստացուած նոր ժապաւինեալ մատեանները՝ քահանաներին և երեսփոխներին յանձնուելու համար, և հները վերցնելով՝ ուղարկում է թեմական խորհրդին, պահելով պատճէնները։ ե) Հաստատում և վաւերացնում է ազգայինների փաստաթղթերը և ստորագրութիւնները և տալիս է մետրիկական քաղուածքներ։ զ) Հաստատում է խնամակալներ մեռած ազգայիններից յետոյ մնացած գոյքերի և որբերի վրայ, հրաժարեցնում է եղած խնամակալներին, թոյլ է տալիս խնամակալներին ծախսեր անել որբերի և գոյքերի վրայ մինչև յիսուն թուման, աւելի մեծ ծախսերի, ինչպէս նաև որբապատկան գոյքերը գրաւ դնելու և ծախելու համար դիմելով թեմական խորհուրդին։ է) Իբրև առաջին ատեան՝ քննում է գործակալութեան մէջ ապրող հայերի ամուսնական խնդիրները, չհաստատեան կասկածելի դէպքերում դիմելով թեմական առաջնորդին (յօդ. 19-րդ) և իրան դիմողների բոլոր կալուածական, ժառանգական և այլ վէճերն ու խորհուրդները»։

Գալով ծխական օրգանների իրաւասութեանը վերաբերալ յօդուածներին, նախ և առաջ յիշատակենք, որ հաստատուած հիմնական կանոնադրութեան 73-րդ յօդուածի համաձայն՝«բացի այս հիմնական կանոնադրութեան յօդուածներից՝ ծխական համայնքի համար պարտաւորապէս գործադրելի է ընդհանուր հայաստանեայց եկեղեցու ծխական կանոնադրութիւնը (տես «Արարատ» 1902, մարտ-ապրիլ) այն փոփոխութիւններով, որ կը սահմանէ Ատրպատականի թեմական ժողովը, ի նկատի ունե-

նալով թեմի եկեղեցական-համայնական կազմակերպութիւնը, տեղական համայնքերի պէտքերը, ղեկավարուելով հայոց կանոնական իրաւունքով և այս հիմնական կանոնադրութեամբ և առաջարկելով ամենայն հայոց կաթուղիկոսի հաստատութեանը*)։ Ծխական ժողովի իրաւասութիւնը անփոփոխ որոշելու է այդ ծխական կանոնադրութեան 19-րդ յօդուածը։ Ծխական խորհրդի (որպիսի հիմնարկութեան մասին, ինչպէս ասացի, ծխական կանոնադրութեան մէջ կանոն չը կայ) իրաւասութիւնը սահմանում են հիմնական կանոնադրութեան 68 և 69-րդ յօդուածները։ «68. Ծխական խորհուրդը ա) կառավարում է ծխական համայնքի բոլոր եկեղեցական-համայնական գործերը և հաստատութիւնները, միևնոյն ժամանակ հանդիսանալով նաև հոգաբարձութիւն ծխական դպրոցների համար. բ) հսկում է երեսփոխի և ծխական համայնքի բոլոր պաշտօնեաների գործունէութեան վրայ. գ) վաւերացնում է ծխականների ստորագրութիւնները. դ) ունի նաև այն բոլոր իրաւունքները և պարտականութիւնները, որ հայաստանեայց եկեղեցու ծխական կանոնադրութիւնը սահմանել է հաչեստեանների համար (տես ծխական կանոնադրութիւնը §§ 20, դ. 73. 74. 82-87. 89). ե) վճռում է իրան դիմող ծխականների վէճերը. զ) ընտրում է խնամակալներ մեռած ծխականներից յետոյ մնացած գոյքի և որբերի վրայ և առաջարկում է ի հաստատութիւն գործակալական խորհրդի։ 69. Իրան վերապահելով ընդհանուր վերահսկողութեան և հաչեատուական իրաւունքը՝ ծխական ժողովը կարող է ծխական խորհրդին յանձնել իր իրաւասութեանը պատկանող (տես ծխական կանոնադրութեան § 19) այս կամ այն գործի տնտեսութիւնը. «71 և 72 յօդուածները մասամբ կրկնում, մասամբ էլ փոփոխում են երեսփոխի գործունէութեան վերաբերեալ ծխական կանոնադրութեան համապատասխան կանոնները»։ 71. Երեսփոխը ծխական խորհրդի գանձապահն է և պարտաւոր է գանձել, պահել և չահեցնել ծխական հասոյթները և արդիւնքները, հաւաքել և ամեն ամիսը մի անգամ ուղարկել գործակալական խորհրդին իր ծխի թեմապատկան հասոյթները, կատարել եկեղեցու համար անհրաժեշտ ծախսերը մինչև տասն և հինգ թուման ինքնագլուխ, աւելի ծախսերի համար մինչև յիսուն թուման՝ ստանալով ծխական

---

*) Ուսումնասիրած լինելով թէ՛ ծխական կանոնադրութիւնը և թէ՛ ներկայ հիմնական կանոնադրութիւնը՝ ես պարտքս համարեցի ենթարկել ծխական կանոնադրութիւնը սոյն յօդուածով պահանջուած փոփոխութիւններին և ներկայացնել Ատրպատականի թեմի դ. առաջնորդին՝ թեմական ժողովի հաւանութեանը առաջադրելու համար։

ժողովի համաձայնութիւնը և գործակալական խորհրդի գրաւոր թոյլտուութիւնը, իսկ աւելի ևս մեծ ծախսերի համար—թեմական խորհրդի թոյլտուութիւնը։ 72. Երեսփոխը պարտաւոր է ամեն տարի մի անգամ ծխական ժողովի սովորական տարեկան նիստին, որի ժամանակը որոշում է թեմական ժողովը, մանրամասն հաշիւ ներկայացնել, որպիսին ծխական ժողովը հաստատում է՝ ծխական խորհրդի զեկուցագիրը լսելուց յետոյ»։

Օրգանների կազմը, համաձայն 9-րդ ընդհանուր կանոնում յիշատակուած՝ մեր կանոնական իրաւունքի հիմնական սկզբունքի, ընտրութեամբ է հաստատուում։ Ժողովների կազմը համայնքից է ընտրուում, իսկ խորհուրդներինը ժողովրդից։ Ժողովների կազմի ընտրութեան մասին արդէն խօսք եղել է. անցնենք ուրեմն խորհուրդներին։

«43. Ատրպատականի թեմական խորհուրդը բաղկանում է ութը հոգուց՝ երկու ի պաշտօնէ անդամներից, որ են թեմական առաջնորդը և առաջնորդական տեղապահը, և վեց թեմական խորհրդականներից, որոնց ընտրում է թեմական ժողովը չորս տարի ժամանակով թաւրիզաբնակ հոգևորականներից կամ աշխարհականներից։ Թեմական խորհրդականների կէսը իւրաքանչիւր երկու տարին լրանալուց յետոյ հերթով դուրս է գալիս։ Ընտրութեան ժամանակ ամենից շատ ձայն ստացողը համարւում է աւագ անդամ թեմական խորհրդի։ Ծանօթութիւն ա. այս հիմնական կանոնադրութեան գործադրութեան առաջին երկու տարուց յետոյ թեմական խորհրդականների կէսը դուրս է գնում վիճակով, իսկ այնուհետև հերթով։ Ծանօթ. բ. թեմական խորհուրդը Թաւրիզի գործակալութեան համար հանդիսանում է նաև գործակալական խորհուրդը։ Ծանօթ. գ. թեմական խորհրդի կազմի և սրա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների մասին թեմական առաջնորդը իւրաքանչիւր անգամ զեկուցանում է ամենայ հայոց կաթուղիկոսին»։

Թիֆլիսի նախագծի համապատասխանյօդուածի համեմատութեամբ՝ այստեղ մի կարևոր փոփոխութիւն է արուած։ Թիֆլիսի նախագծով՝ թեմական խորհրդականների ընտրութիւնը լինում էր չորս տարին մի անգամ և բոլոր վեց խորհրդականները միանգամից էին ընտրուում, և բոլոր խորհրդականների իրաւազօրութեան քառամեայ ժամանակամիջոցը միևնոյն ժամանակ սկսուելով՝ միասին էլ վերջանում էր, և նոր ընտրութեան ժամանակ նորից ընտրելու էր բոլոր վեց խորհրդականներին։ Հիմնական կանոնադրութիւնը անփոփոխ պահելով թեմական խորհրդականների իրաւազօրութեան քառամեայ ժամանակամիջոցը, փոխում է ընտրութեան կարգը այսպէս. ընտրութիւնը

լինում է իւրաքանչիւր երկու տարին մի անգամ և իւրաքանչիւր ընտրութեան ժամանակ ընտրում են ոչ թէ բոլոր խորհրդականներին, այլ միայն կէսը. այնպէս որ բոլոր խորհրդականների իրաւազօրութեան ժամանակամիջոցը միասին չէ սկսւում և միասին վերջանում, այլ կէս-կէս. իւրաքանչիւր երկու տարի խորհրդականներից միայն երեքի իրաւազօրութեան ժամանակն է լրանում, իսկ երեքինը դեռ տեսնում է կրկին երկու տարի. այնպէս որ նորընտիր երեք խորհրդականները միանում են հին կազմից մնացած երեքի հետ։ Այս փոփոխութիւնը այն առաւելութիւնն ունի, որ թեմական խորհրդի ամբողջ կազմի միանգամից փոփոխուելու առաջն է առնում, որով այդ կառավարիչ մշտական օրգանի գործունէութեան մէջ անհրաժեշտ անընդհատ յաջորդակցութիւն է հաստատւում։ Երեսփոխանական (պատգամաւորներից կազմուող) և պարբերաբար գումարուող հիմնարկութիւնների (ժողովների) համար այդ յաջորդակցութիւնը մի անհրաժեշտութիւն չէ. նոյնիսկ երբեմն ընդհակառակը, անհրաժեշտ է համարւում, որ երեսփոխանական ժողովի կազմը ամբողջովին նորոգուի, որպէսզի նոր նատաշրջանում ժողովրդի նոր ներկայացուցիչներ հանդէս գան, նորանոր և զանազան ժողովրդական հոսանքներ արտայայտութիւն գտնեն։ Բայց նոյն բանը չէ կարելի ասել նաև մշտական գործադիր օրգանների համար։ Եթէ մի օր յանկարծ միանգամից փոխւում է այսպիսի ատեանի ամբողջ կազմը և հոների փոխարէն բոլորն էլ նոր մարդիկ են գալիս, գործերին, խորհրդի դիւանին և ընթացիկ վարչական գործնականին (պրակտիկային) բոլորովին անծանօթ, ապա այսպիսի դէպքում անխուսափելի կերպով բազմաթիւ անտեղութիւններ, անյարմարութիւններ, անտեղակութեան և անփորձութեան սխալներ են տեղի ունենում. էլ չեմ ասում ժամանակի կորուստի մասին, որի պատճառն է նորեկ անդամների գործերի հետ ծանօթանալու և ընտելանալու կարիքը։ Նորակազմ ատեանի գործունէութեան գրեթէ ամբողջ առաջին տարին այսպիսի պայմաններում սովորաբար ապարդիւն է անցնում *)։ Մշտական օրգանների կազմի անընդհատ յաջորդակցութեան անհրաժեշտութիւնը չնչտելիս՝ նպատակս չէ պնդել, թէ այդ օրգանների գործունէութեան մէջ ոչ մի նորութիւն, թարմութիւն, փոփոխութիւն պէտք է չը լինի,—որ միևնոյն ուղղութիւնը, միևնոյն ոգին, միևնոյն

*) Այս բոլորը ի նկատի ունենալով՝ ցանկալի է, որ մեր հոգևոր դպրանոցների հոգաբարձութիւնների կազմի ընտրութեան եղանակը փոփոխուէր համեմատ յաջորդակցութեան սկզբունքին։

սովորոյթը և գործնականը միշտ պէտք է առաջնորդէ այդ օրգանների գործունէութեանը։ Ոչ. նորոգող, թարմացնող և փոփոխող հոսանքներ շատ և շատ ցանկալի են։ Սակայն, մշտական օրգանի գործունէութեան իւրաքանչիւր նոր շրջան անցեալի կրկնութիւնը չը լինելով հանդերձ, պէտք է անցեալի շարունակութիւնը լինի. այսինքն անցեալի հետ կապակցուած լինի, անցեալի վրայ յենուի, անցեալը ի նկատի ունենայ իբր իրական յենակէտ իւրաքանչիւր նոր քայլի համար։ Ահա այս բոլորը ի նկատի առնելով՝ հիմնական կանոնադրութիւնը սահմանում է. «Թեմական խորհրդականների կէսը իւրաքանչիւր երկու տարին լրանալուց յետոյ հերթով դուրս է գալիս։» Ուրիշ խօսքով՝ իւրաքանչիւր անդամ խորհրդի եղած կազմի կիսից աւելին փոխուել չէ կարող։ Սակայն կարող է կազմը և անփոփոխ նոյնը մնալ, եթէ «դուրս եկող» խորհրդականները, այսինքն այն խորհրդականները, որոնց պաշտօնէութեան ժամանակամիջոցը լրացել է, կրկին ընտրուեն (վերընտրուեն) նոր քառամեակի համար։ Յամենայն դէպս՝ իւրաքանչիւր անդամ, խորհրդականների կիսի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրանալիս, միւս կէսը դեռ կը շարունակէ դարձեալ երկու տարի մնալ պաշտօնում և վարել գործերը նորեկ—նորընտիր կամ վերընտիր խորհրդականների հետ։

Դիւրախտաբար նոյն կարգը սահմանուած չէ նաև գործակալական խորհրդի համար։ «58. Իւրաքանչիւր գործակալութիւն ունի իւր խորհուրդը, որ բաղկանում է գործակալ քահանայից և երեք գործակալական խորհրդականներից։ Գործակալ քահանային նշանակում է թեմի առաջնորդը. իսկ գործակալական խորհրդականներին ընտրում է աշխարհականներից կամ հոգևորականներից գործակալութեան ժողովը չորս տարի ժամանակով և առաջարկում է թեմ. խորհրդին ի հաստատութիւն։ Գործակալական խորհրդականներից մէկին գործակալական խորհուրդը ընտրում է նախանդամ երկու տարի ժամանակով»։*)

---

*) 59-րդ յօդուածը ունի երեք ծանօթութիւն։ «Ծանօթ ա. գործակալութեան ժողովը ընտրում է նաև երկու գործակալական փոխխորհրդականներ, որոնք փոխարինում են գործակալական խորհրդականներին սրանց երկարատև բացակայութեան կամ տկարութեան ժամանակ իրանց ընտրութեան ձայնից առաւելութեան կարգով։ Ծանօթ. բ. փոխանորդանիստ կենտրոնավայրում առաջնորդական փոխանորդը կատարում է նաև գործակալի պաշտօն։ Ծանօթ. գ. գործակալական խորհուրդը հանդիսանում է նաև ծխական խորհուրդ գործակալութեան կենտրոնի աւագ եկեղեցու համար, ուստի և ծխական խորհրդի իրաւասութեանը վերաբերող հարցեր վճռելիս պարտաւոր իրէ նիստերին հրաւիրել նաև նոյն եկեղեցու երեսփոխին»։

Ամենայն հաւանականութեամբ ներկայ հիմնական կանոնագրութեան՝ թեմական ժողովի նախաձեռնութեամբ փոփոխելի յօդուածներից առաջինն այս յօդուածն է լինելու. փոփոխութիւնը կատարելիս յարմար կը լինի գործակալական խորհրդականների թիւը զոյգ թիւ վերածել (օր չորսի) և ամբողջ յօդուածը խմբագրել 43-րդ յօդուածի և նրա ա. ծանօթութեան համեմատ։ Նոյնպիսի փոփոխութեան յարմար կը լինի ենթարկել նաև ծխական խորհրդականներին վերաբերեալ յետագայ 66-րդ յօդուածը. «իւրաքանչիւր ծխական եկեղեցի ունի իւր ծխական խորհուրդը, որ կազմուում է նոյն եկեղեցու աւագ քահանայից, երեսփոխից և երեք ծխական խորհրդականներից, որոնց ընտրում է ծխական ժողովը չորս տարի ժամանակով իր գրագէտ անդամներից և առաջարկում թեմական խորհրդին ի հաստատութիւն։»

Ժողովների համար անձնափոխանորդներ աւելորդ համարելով, խորհուրդների համար, ընդհակառակը, աւելի յարմար դատուեց ընտրել փոխխորհրդականներ՝ բացի ծխական խորհրդից։ «44. Թեմական ժողովը ընտրում է թաւրիզաբնակ հոգևորականներից կամ աշխարհականներից նաև չորս թեմական փոխխորհրդականներ, որոնք փոխարինում են թեմական խորհրդականներին նրանց երկարատև բացակայութեան կամ տկարութեան ժամանակ իրանց ընտրութեան ձայնից առաւելութեան կարգով։» Գործակալական փոխխորհրդականների մասին տես վերևում, 58-րդ յօդուածի ա. ծանօթութիւնը։

Ժողովների և խորհուրդների պաշտօնական գործունէութեան և գործավարութեան եղանակն ու ձևերը որոշում են (թէև ոչ լիակատար կերպով) յետագայ յօդուածները.

Թեմական ժողովի համար *)։ «25. Պատգամաւորներին ժողովի հրաւիրելու իրաւունք ունին՝ ա) թեմի առաջնորդը, բ) պատգամաւորների $^1/_2$ մասը և գ) թեմի առաջնորդի բացակայութեան ժամանակ առաջնորդական տեղապահը։ 26. Թեմական ժողովը սովորաբար գումարուում է երկու տարին մի անգամ։ Անյետաձգելի հարցեր վճռելու համար և հարկ եղած դէպքում՝ կարող են գումարուել բացի այդ սովորական նիստից թեմական ժողովի նաև արտակարգ նիստեր։ Ծանօթութիւն ա. պատգամաւորների ընտրութեան համար թեմական խորհրդից որոշ

*) Գործակալութեան ժողովի համար մի հատ յօդուած կայ, որ առաջ եմ բերում. «57. Ներկայացուցիչներին գործակալական ժողովի է հրաւիրում և ժողովին նախագահում է գործակալ քահանան, իսկ սրա բացակայութեան դէպքում գործակալական խորհրդի նախանդամը։»

ժամանակամիջոց է նշանակւում, որից անմիջապէս յետոյ, ինչպէս և առհասարակ թեմական ժողովի սովորական նիստեր գումարելու դէպքերում՝ թեմական առաջնորդը, կամ սրան փոխարինող առաջնորդական տեղապահը և կամ սրանց բացակայութեան դէպքում թեմական խորհրդի աւագ անդամը, պարտաւոր է պատգամաւորներին թեմական ժողովի հրաւիրել։ Յանօթ. ը. թեմական առաջնորդի մահուան, հրաժարման կամ հրաժարեցնելու դէպքում պատգամաւորները անմիջապէս ժողովի են հրաւիրւում առաջնորդ ընտրելու։ Յանօթ. գ. թեմական ժողովը գումարւում է Թաւրիզի մայր եկեղեցում։ 27. թեմական ժողովի պատւաւոր նախագահն է առաջնորդը. իսկ ժողովի նիստերը կառավարում է առանձին ատենապետ, որին ժողովն ընտրում է իր անդամներից իւրաքանչիւր նստաշրջանի համար. Յանօթութիւն. թեմական առաջնորդը, թեմական խորհուրդը և սրա քարտուղարը ներկայ են լինում ժողովի նիստերին՝ հարկաւոր հաշիւներ և տեղեկութիւններ հաղորդելու համար։ 28. թեմական առաջնորդին հրաժարեցնելու և այս հիմնական կանոնադրութիւնը փոփոխելու և լրացնելու հարցերը վճռւում են բոլոր պատգամաւորների ձայների $^2/_3$ բազմութեամբ։»

Հիմնական կանոնադրութեան 27-րդ յօդուածը տարբերւում է Թիֆլիսի նախագծի համապատասխան յօդուածից։ Մինչդեռ Թիֆլիսի նախագիծը անօրինում էր, թէ թեմական ժողովին նախագահում է թեմական առաջնորդը, հիմնական կանոնադրութեան 27-րդ յօդուածի համաձայն՝ թեմական առաջնորդը թեմական ժողովի միայն «պատւաւոր նախագահն է». նա ժողովի կազմին մասնակից չէ, ժողովի նիստերին չէ նախագահում և կառավարում։ Թեմական ժողովը յատուկ ատենապետ ունի, որին ժողովն ընտրում է իր անդամներից։ Այս կարևոր փոփոխութիւնն ունի մի քանի պատճառներ։ Թեմական առաջնորդին ընտրում և հրաժարեցնում է պաշտօնից թեմական ժողովը. նոյն ժողովի «վերին և ընդհանուր հսկողութեան և հաշւառութեան» ենթակայ է առաջնորդի գործունէութիւնը։ Այս բոլորը այնպիսի հանգամանքներ են, որոնք անյարմար են դարձնում թեմական առաջնորդի համար նախագահելը թեմական ժողովի նիստերին։ Թիֆլիսի նախագիծն էլ նախատեսել էր այս անյարմարութիւնը և անօրինել, որ «առաջնորդի անձնաւորութեան վերաբերեալ հարցեր քննելիս՝ թեմական ժողովին նախագահում է ոչ թէ առաջնորդը, այլ առաջնորդական տեղապահը»։ Սակայն, առաջնորդական տեղապահի նախագահութեան դեմ կարելի է առաջ բերել թէ առաջնորդի նկատմամբ նոր բացադրուած առաջարկութիւնը և թէ այն յատուկ հանգամանքը,

որ առաջնորդական տեղապահին, որպէս միայն թեմական առաջնորդից նշանակուած մի պաշտօնեայի, որ թեմական ժողովից ընտրուած չէ, հաղիւ թէ վայելուչ լինէր թեմական ժողովին նախագահելու իրաւունքը տալ։ Էլ չեմ ասում, որ առաջնորդական տեղապահը իրան նշանակող առաջնորդի մարդը (alter ego-ն) լինելով, նոյն առաջնորդի անձնաւորութեանը վերաբերեալ հարցերում երբէք չէզոք անձ նկատուելու չէ։ Բացի այս բոլորից, Թիֆլիսի նախագծի այս յօդուածը նաև թերի էր. նա նախատեսել էր առաջնորդի նախագահութիւնը արգելող միայն այն հանգամանքները, որոնք կապ ունեն առաջնորդի անձնաւորութեան և առաջնորդական գործունէութեան վերաբերեալ հարցերի հետ։ Բայց արգելասիթ մի այլ կարևոր հանգամանք էլ կայ,—այն՝ որ թեմ. առաջնորդը թեմ. խորհ. նախագահն է և հետևապէս թեմ. խորհ. կարծիքների և գործունէութեան ներկայացուցիչ և պաշտպան։ Հետևապէս, թեմ. առաջնորդը պէտք է չը նախագահէ թեմական ժողովի նիստերին նաև այն բոլոր դէպքերում, երբ ժողովում քննուելու խնդիրը որևէ կապ ունի նաև թեմական խորհրդի գործունէութեան հետ։ Ուրիշ խօսքով գրեթէ ամեն դէպքում թեմական առաջնորդը անկարող պիտի լինի նախագահել թեմական ժողովին։ Թեմական ժողովի ատենապետի պաշտօնը և թեմական խորհդի նախագահի պաշտօնը միմիանցից բաժանելու առաւելութիւններից մէկն էլ այն է,որ այդպիսով այս երկու հիմնարկութիւնների գործունէութիւնը բոլորովին անկախ, ինքնուրոյն բնաւորութիւն և արժէք կ'ունենայ, մէկի կարծիքը ոչ մի ճնշում չի գործի միւսի վրայ, անաչառ և ազատ քննադատութեան կ'ենթարկուի միւսի կողմից. այսպիսով երօք երկու հիմնարկութիւն կը լինեն դրանք, և խնդիրները երօք կրկին քննութեան կ'ենթարկուեն։ Թեմական խորհրդի համար էլ այս բաժանումը այն առաւելութիւնը կ'ունենայ, որ թեմական ժողովին կը ներկայացուի իսկապէս խորհրդի կարծիքը և ենթադրութիւնը և ոչ թէ խորհրդում յայտնուած այն կարծիքը, որի կողմնակիցն է եղել թեմական առաջնորդը։

«29. Թեմական ժողովը իր միջից կամ դրսից ընտրում է մի քարտուղար, որ կազմում է ժողովի նիստերի արձանագրութիւնը։ Ծանօթութիւն. ժողովի արձանագրութիւնները վաւերական են, երբ վաւերացուած են ներկայ եղող պատգամաւորների մեծամասնութեան ստորագրութեամբ, իսկ 28-րդ յօդուածում նախատեսնուած դէպքում—բոլոր պատգամաւորների $^2/_3$ մասի ստորագրութեամբ։ 31. Թեմական ժողովի խորհրդածութեանը և վճռատութեանը առաջարկուող խնդիրները յանձնուում են

թեմական առաջնորդին, որը թեմական ժողովի ատենապետի և թեմական ժողովի ու թեմական խորհուրդի քարտուղարների գործակցութեամբ դասաւորում է և օրակարգով ներկայացնում թեմական ժողովին։ Թեմական ժողովը կարող է փոխել խնդիրների՝ օրակարգում բռնած հերթը։ Խնդիրներ թեմական առաջնորդին կարելի է ներկայացնել թեմական ժողովի նստաշրջանի ամբողջ ընթացքում։ 32. Թեմական ժողովը ամենայն հայոց կաթուղիկոսի հետ յարաբերութիւն է պահում թեմական առաջնորդի կամ առաջնորդի բացակայութեան դէպքում առաջնորդական տեղապահի միջոցով։ Թեմական առաջնորդը կամ առաջնորդական տեղապահը պարտաւոր է թեմական ժողովի որոշումները յընթացս մի եօթնեկի ուղարկել նորին վեհափառութեանը, տեղեկացնելով այդ մասին թեմական ժողովի ատենապետին։ Առաջնորդարանի այս կէտում զանցառու գտնուելու դէպքում՝ թեմական ժողովի ատենապետն է կատարում նրա պարտքը»։

Թեմական խորհրդի գործավարութեան եղանակը կարգաւորում են յետագայ յօդուածները։ 46ՁՁ(տե՛ս վերևում առաջ բերուած)։ «47. Թեմական խորհրդի նիստերին նախագահում է թեմական առաջնորդը, սրա անկարողութեան դէպքում առաջնորդական տեղապահը, իսկ երբ անկարող է նախագահել նաև առաջնորդական տեղապահը—թեմական խորհրդի աւագ անդամը։ 49. Թեմական անդուկի անմիջական հսկողութիւնը և բանալին յանձնւում է թեմական խորհրդի գանձապահին, որին թեմական խորհուրդը ընտրում է իր միջից չորս տարի ժամանակով փոխադարձ երաշխաւորութեամբ։ Ծանօթութիւն. Թեմական խորհուրդը պարտաւոր է իւրաքանչիւր ամիս ստուգել թեմական անդուկը։ 50. Թեմապատկան գումարներից մինչև երկու հարիւր յիսուն թուման պահւում է թեմական անդուկում, իսկ աւելի գումարները ապահով գրաւականով չահեցնւում են թեմական խորհրդի անունով նոյն խորհրդի օրինաւոր վճռի համաձայն և բոլոր անդամների ընդհանուր պատասխանատուութեամբ։ 52. Թեմական առաջնորդը և թեմական խորհուրդը ունեն մի ընդհանուր դիւանատուն, որի համար թեմական խորհուրդը քարտուղար և գրագիրներ է վարձում՝ թեմական առաջնորդի հաստատութեամբ։ Քարտուղարը համարւում է գրագիրների անմիջական իշխանաւոր։ 53. Դիւանատան քարտուղարը պարտաւոր է պահել ժապաւինեալ մատեաններ թեմական խորհրդի արձանագրութիւնների և գործավարութեան բոլոր բաժինների համար և հսկել դիւանական բոլոր թղթերի անկորուստ և կանոնաւոր պահպանութեան վրայ։ 54. Թեմական խորհրդի բո-

լոր պաշտօնական թղթերը, այն է՝ գրագրութիւններ զանազան անձերի և հաստատութիւնների հետ, արձակած վճիռները, խնդրատուներին տուած վկայագրերը և խորհրդի տուած որոշումների և վճիռների պատճէնները կայն, պէտք է կրեն թեմական առաջնորդի կամ առաջնորդական տեղապահի և քարտուղարի ստորագրութիւնները և դրոշմուած լինեն առաջնորդական կնքով։»

Գործակալական խորհրդին վերաբերում են՝ յօդուած 59 (տես վերևում)։ «60. Գործակալական խորհրդի նիստերին նախագահում է գործակալը, իսկ սրա անկարողութեան դէպքում—նախանդամը։ 63. Գործակալական խորհուրդը իւր միջից ընտրում է փոխադարձ երաշխաւորութեամբ մի զանձապահ երկու տարի ժամանակով, որին յանձնում է իւր դրամարկղի անմիջական հսկողութիւնը և բանալին։ Ծանօթութիւն. Գործակալական խոոհուրդը պարտաւոր է ամեն ամիս կատարել իր դրամարկղի ստուգութիւնը։ 64. Գործակալական խորհուրդը ունի մի գործավար, որ պարտաւոր է պահել թեմական խորհրդի կնքով վաւերացուած ժապաւինեալ մատեաններ գործավարութեան բոլոր բաժինների համար, կանոնաւոր և անկրուստ պահպանել գործակալական խորհրդի բոլոր թղթերը և կազմել նրա նիստերի արձանագրութիւնը։ 65. Գործակալական խորհրդի բոլոր պաշտօնական թղթերը պէտք է կրեն նախագահի և գործաւարի ստորագրութիւնները և դրոշմուած լինեն գործակալական խորհրդի կնքով, որ ստանում է թեմական խորհրդից»։

Թիֆլիսի նախագիծը առանձին ուշադրութիւն էր դարձրել ժապաւինեալ մատեանների վրայ, որ մեծ նշանակութիւն ունեն թէ պաշտօնական գործերի ստուգութեան համար և թէ կարևոր վիճակագրական տեղեկութիւններ ունենալու համար։ Հիմնական կանոնագրութիւնը գրեթէ անփոփոխ կրում է այդ յօդուածները։

«51. Թեմական խորհուրդը պարտաւոր է ունենալ՝ ա) ամբողջ թեմի բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, այն է՝ չէն ու աւերակ վանքերի ու եկեղեցիների, դպրոցների, գրադարանների և առհասարակ բոլոր կրթական և բարեգործական հաստատութիւնների, և դրանց պատկանող կամ յատկացուած անշարժ գոյքի տպագրած մանրամասն ցուցակը. բ) ամբողջ թեմի հայ ազգաբնակութեան աճման, մահացութեան և ամուսնութիւնների վիճակագրական աղիւսակները՝ գործակալական խորհուրդների չափաբերականներից քաղուած տեղեկութիւնների համաձայն և գ) ժապաւինեալ մա-

տեաններ թեմի բոլոր եկեղեցական-համայնական պաշտօնեաների անուանացուցակով և եկեղեցական-համայնական հիմնարկութիւններին պատկանող կամ յատկացուած շարժական գոյքերի, այն է՝ դրամագլուխների, անօթեղէնի, զարդերի, գրքերի, կահկարասիքի եայլն, մանրամասն ցուցակագրութեամբ*)»։

Այդ ժապաւինեալ մատեանները թեմական խորհուրդն է բաժանում ամեն տարի գործակալական և ծխական խորհուրդներին և ամեն տարուայ վերջը յետ է ստանում իր գիւանում պահելու համար (տես յօդ. 48, ժբ. 61, դ.)։

Այս է գործադրութեան համար հաստատուած Ատրպատականի հիմնական կանոնագրութեան բովանդակութիւնը**)։

Կանոնագրութիւնը անյապաղ գործադրման յանձնուած լինելով՝ ուրեմն շուտով կազմակերպուելու և գործելու են թեմի կառավարիչ հիմնարկութիւնները։ Թիֆլիսի նախագծի 28-րդ յօդուածը այսպէս էր սկսւում. «Այս կանոնագրութիւնը ամենայն հայոց կաթողիկոսի կողմից հաստատուելուց անմիջապէս յետոյ և այնուհետև պարբերաբար ամեն չորս տարին մի անգամ» պատգամաւորների ընտրութիւն է լինելու թեմական ժողով գումարելու համար... եայլն... Այս ընդգծուած նախադասութիւնը վերջնական խմբագրութեան ժամանակ դուրս գցուեց (տես հիմն. կան. յօդ. 23), որովհետև ինքնըստինքեան հասկանալի է, որ եթէ մի կանոնագրութիւն հաստատւում և ի գործադրութիւն է յանձնւում, ապա ուրեմն անմիջապէս էլ

---

*) Նման կանոններ սահմանուած են նաև գործակալական և ծխական խորհուրդների համար։ «62. Գործակալական խորհուրդը պարտաւոր է ունենալ ժապաւինեալ մատեաններ՝ գործակալութեան բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, սրանց պատկանող կամ յատկացուած անշարժ և շարժական գոյքերի, այլ և բոլոր պաշտօնեաների մանրամասն ցուցակագրութեամբ, և ծխական խորհուրդների չափաբերական մատեանների պատճէները։ 70. Ծխական խորհուրդը պարտաւոր է ունենալ ժապաւինեալ մատեաններ՝ ծխի մէջ գտնուած բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, սրանց պատկանող կամ յատկացուած անշարժ և շարժական գոյքերի, այլ և բոլոր պաշտօնեաների մանրամասն ցուցակագրութեամբ, և չափաբերական մատեաններ՝ ծխի բոլոր հայ ընտանիքներում տեղի ունեցած ծնունդների, պսակների և մահացութեան արձանագրութեամբ»։ Ծխական մատեանների մասին յատուկ յօդուածներ կան նաև ծխական կանոնագրութեան մէջ (տես §§ 72, 88)։

**) Հիմնական կանոնագրութիւնը շուտով թեմական ժողովի կարգադրութեամբ հրատարակուելու է Թաւրիզում (տես հիմն. կան. յօդ. 30, ա)։ Իսկ տակաւին տպագրուած չը լինելով, աշխատեցի այդ կանոնագրութեան բոլոր յօդուածները ամբողջութեամբ և անփոփոխ առաջ բերել յօդուածիս ընթացքում, թէպէտ և ոչ կանոնագրութեան հերթով։ Սակայն յօդուածների թւահամարները նոյնպէս նշանակուած լինելով, հետաքրքրուողի համար դժուար չի լինի վերականգնել այդ հերթը։

գործադրուելու է։ Բացի դրանից՝ «կանոնադրութիւնը հաստատուելուց անմիջապէս յետոյ» ոչ միայն թեմական ժողովի գումարումը պէտք է կատարուի, այլ թեմի նաև մեւս բոլոր հիմնարկութիւնները պէտք է պատշաճ կերպով կազմուեն և գործել սկսեն։ Ուստի միայն թեմական ժողովի համար այդ յիշելը անտեղի բան կը լինէր։

Պարսկահայերի կուլտուրական յառաջադիմութեան գործում անկասկած մեծ դեր է կատարելու ներկայ հիմնական կանոնադրութիւնը։ Օրէնքն ու դպրոցն են ամեն մի ժողովրդի բարգաւաճման գործօնները, հիմքերը։ Կանոնապահութեան և լուսաւորութեան համար եղած ջանքերը թող աւելի ու աւելի զարգանան, հաստատուն դառնան և անսայթաք առաջ տանեն պարսկահայերի քաղաքակրթութեան գործը։

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ